

«իրապաշտներ»ը նաեւ կ'ընդունին՝ բարոյական դատողութիւններու սխալականութիւնը (Fallibilism), այսինքն՝ անոնց *ճիշդ* կամ *սխալ* ըլլալը:

Առանց մանրամասնութիւններ տալու, յիշենք միայն, որ եթէ վերոյիշեալ բարոյական իրողութիւնները միայն մասամբ ենթակայականութենէն անկախ են, կը դասուին, որպէս՝ «*տկար բարոյական իրապաշտութիւն*». իսկ եթէ բոլորովին անկախ են, կը դասուին, որպէս՝ «*զօրաւոր բարոյական իրապաշտութիւն*»:

Բարոյական իրողութիւններու իրապաշտական արժէքը կամ Էաբանական յատկանիշները կարգ մը բարոյագէտներու համար *բնապաշտական* բնոյթ կը կրեն (այսինքն՝ անհատի բնութեան հետ առնչուած են), իսկ ուրիշներու համար՝ *ոչ-բնապաշտական* կամ ենթակայական բնոյթ կը կրեն (այսինքն՝ անհատի բանականութեան հետ առնչուած են): Կայ նաեւ Էաբանական յատկանիշներ, որոնք *գերբնապաշտական* բնոյթ կը կրեն (այսինքն՝ անհատէն դուրս, արտաքին առնչութիւն մը կամ ատեն մը կայ, ինչպէս օրինակ՝ Աստուած):

Ա. Բարոյական բնապաշտութիւն (Moral Naturalism)

Այս ուղղութեան համաձայն, գոյութիւն ունին բարոյական արժէք ունեցող իրողութիւններ: Այս ուղղութեան հետեւորդները բարոյական պահանջները կը հիմնաւորեն բնութեսականութեամբ եւ բոլորովին կամ մասամբ անկախ կը մնան ենթակայականութենէն (Subjectivity): Այլ իմաստով, տեսութեան նպատակն է, բարոյական հասկացութիւնները եւ հիմնաւորումները վերածել՝ բնագիտական համոզիչ հասկացութիւններու եւ հիմնաւորումներու: Այս գաղափարը պարզենք օրինակով մը.- օգտապաշտութեան պարագային, բարոյական *լաւ* ու *բարի*ն առարկայական իրողութիւն դառնալով, կրնան վերածուիլ՝ *օգուտի* կամ *շահի*, որոնք աւելի շօշափելի են:

Հետեւեալ բարոյագիտական տեսութիւնները կրնան *բարոյական բնապաշտութեան* համապատասխանել.- *օգտապաշտութիւնը* (Utilitarianism), *հաճոյապաշտութիւնը* (Hedonism), *առաքինութեան բարոյագիտութիւնը* (Virtue Ethics):

Բ. Բարոյական ոչ-բնապաշտութիւն (Moral Non-Naturalism)

Այս ուղղութիւնը բոլորովին կը մերժէ՝ բարոյական բնապաշտութիւնը եւ չընդունիր՝ բարոյական հասկացութիւններու վերածումը՝ բնագիտական հասկացութիւններու: Այս ուղղութիւնը կը մերժէ նաեւ բարոյական հակա-իրապաշտութեան բոլոր ձեւերը, ինչպէս բարոյական ենթակայապաշտութիւնը (Moral Subjectivism), որ իր կարգին չ'ընդունիր բարոյական իրողութիւններու առարկայացումը:

Բարոյական ոչ-բնապաշտութեան գլխաւոր ջատագով նկատուող անգլիացի բարոյագէտ-փիլիսոփայ **Գ. Ե. Մուրի** համաձայն, բարոյական *լաւ* ու *բարի*ն՝ պարզ, անբնութագրելի եւ ոչ-բնական հասկացութիւն մըն է, զոր կարելի չ'է վերածել՝ բնական (օգուտ, շահ, հաճոյք, եւայլն...) կամ գեր-